Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

Եթե Դուք տեղեկատվական ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքէջում, խնդրում ենք ուշադրություն դարձնել վերջինիս գործողության ամսաթվին: Տպագիր տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք տպագիր տարբերակով, ապա մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք www.fastbank.am հասցեով, դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+374 10) 510 000 հեռախոսահամարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ * ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՎԱՐԿԵՐ			
Վարկի նպատակը	ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացում, արդիական տեխնոլոգիաների ներդրում և ոչ ավանդական մշակաբույսերի արտադրություն **		
Վարկի տեսակը	Գյուղատնտեսական վարկ		
Վարկի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո		
Վարկառու	18 տարեկանը լրացած ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ 18 տարեկանը լրացած ՀՀ ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ		
Վարկի ժամկետ	24-96 ամիս ***		
Վարկի մայր գումարի վճարման արտոնյալ ժամկետ	0-60 ամիս ***		
Վարկի գումար	Նվազագույն՝ 12,000,000 ՀՀ դրամ Առավելագույն՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի նորմատիվով թույլատրելի սահմանաչափը	Նվազագույն՝ 30,000 ԱՄՆ դոլար Առավելագույն՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի նորմատիվով թույլատրելի սահմանաչափը	Նվազագույն՝ 30,000 Եվրո Առավելագույն՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի նորմատիվով թույլատրելի սահմանաչափը

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	13%	10%	9%
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	13.77 - 14.33%	10.45 – 10.98%	9.36 - 9.88%
Սուբսիդավորման չափ ****	• այգեհիմնման համար՝ 7 տոկոսային կետ • առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցանցի ներդրման համար՝ 9 տոկոսային կետ • ոչ ավանդական բարձրարժեք, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման համար՝ 12 տոկոսային կետ	• այգեհիմնման համար՝ 3 տոկոսային կետ • առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցանցի ներդրման համար՝ 5 տոկոսային կետ • ոչ ավանդական բարձրարժեք, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման համար՝ 7 տոկոսային կետ	• այգեհիմնման համար՝ 3 տոկոսային կետ • առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցանցի ներդրման համար՝ 5 տոկոսային կետ • ոչ ավանդական բարձրարժեք, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման համար՝ 7 տոկոսային կետ
Վարկառուի նկատմամբ պահանջներ	Վարկային պատմություն. ✓ Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգման բացակայություն և/կամ ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: ✓ Գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն:		

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

Մարման եղանակ	✓ Անուիտետային (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում) ✓ Դիֆերենցված (Մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում) ✓ Անհատական վճարումների ժամանակացույց Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության
Սուբսիդավորման պայմաններ	- Տոկոսադրույքի սուբսիդավորումը կարող է դադարեցվել՝ • եթե չեն պահպանվել Ծրագրով սահմանված պահանջները, վարկը նպատակային չի օգտագործվել, կամ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերվել է սույն ծրագրի պայմանների խախտում, • եթե շահառուի կողմից տրամադրվել է ակնհայտ կեղծ տեղեկատվություն, • եթե առկա են տվյալ վարկի մասով վարկառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային վաթսուն օրվանից ավելի ժամկետանց պարտավորություններ կամ Բանկի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով վարկն օբյեկտիվ չափանիշներով ստանդարտ դասով դասակարգված չէ, • Վարկառուի և Բանկի միջև կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում: - Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման (ներառյալ վարկառուի նախաձեռնությամբ վարկային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և ծրագրով նախատեսված աշխատանքներն ավարտին չհասցնելու դեպքերի՝ անկախ առանձին փուլերում կատարված աշխատանքների) և ակնհայտ կեղծ տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև Ծրագրով սահմանված պայմանների և պահանջների խախտման կամ Մոնիթորինգի արդյունքում Ծրագրի պայմանների խախտում հայտնաբերելու դեպքերում մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման: - Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով սահմանված պայմանների/ժամկետների խախտման կամ ներկայացված ակնհայտ կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում Բանկը միակողմանիորեն փոփոխում է վարկի տոկոսադրույքը՝ կիրառելով Բանկի **«Ագրոֆաթ» գյուղատնտեսական վարկատեսակի** շրջանակներում վարկի պայմանագրային ժամկետին համապատասխան գործող առավելագույն տարեկան տոկոսադրույքով կամ դադարեցնել հերթական փուլերով նախատեսված վարկի գումարի տրամադրումը կամ պահանջել վարկի ամբողջական վաղաժամկետ մարում:

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

Վարկի տրամադրման և սպասարկման վճար	Չի սահմանվում
Ժամկետանց մայր գումարի տույժ	*0.1% օրական*
Ժամկետանց տոկոսի տույժ	*0.13% օրական*
Վարկի վաղաժամկետ մարման տույժ *****	Չի սահմանվում
Ապահովման միջոց	✓ Անշարժ գույք և/կամ տրանսպորտային միջոց***, ✓ Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ: ***Ավտոտրանսպորտային միջոց, որի արտադրման ժամկետը գրավադրման պահին չպետք է ավելի մեծ լինի, քան՝ ✓ ռուսական արտադրության ավտոտրանսպորտային միջոցի համար՝ 5 տարին, ✓ այլ երկրների արտարդրության ավտոտրանսպորտային միջոցի համար՝ 10 տարին:
Ապահովագրություն	Ավտոտրանսպորտային միջոցները ենթակա են պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության՝ հօգուտ Բանկի, առնվազն վարկի գումարի չափով և վարկի գործողության ամբողջ ընթացքում յուրաքանչյուր տարի ապահովագրական պայմանագրի վերակնքման պայմանով: ✓ Ապահովագրությունը իրականացվում է հաճախորդի կողմից:
Վարկ/Գրավ առավելագույն արժեք	Համաձայն **Հավելված 1**-ի: ✓ Այն դեպքում, երբ անշարժ գույքը չի ապահովում անհրաժեշտ վարկ/գրավ հարաբերակցությունը, ապա որպես գրավի առարկա ընդունվող տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում ընդհանուր վարկ/գրավ հարաբերակցության հաշվարկում տրանսպորտային միջոցի մասնաբաժինը չի կարող գերազանցել 20%-ը:
Գրավի գնահատում	Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից: ✓ Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար:

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

Երաշխավորների նկատմամբ պահանջներ (առկայության դեպքում)	Ֆիզիկական անձ (18-65 տարեկան), ով. ✓ չունի գործող ժամկետանց վարկային պարտավորություններ. ✓ վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: ✓ Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ ապահովված լինի գրանցված աշխատավարձով:
ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման ժամկետ	Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	Որոշման կայացումից հետո մինչև 1 աշխատանքային օր
Վարկի տրամադրման ժամկետ	Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց և գրավի իրավունքի պետական գրանցումը իրականացնելուց հետո՝ մինչև 1 աշխատանքային օր
Որոշման վավերականության առավելագույն ժամկետ	30 աշխատանքային օր Ընդ որում, Բանկը իրավասու է մերժել վարկի տրամադրումը, եթե փոփոխվել են վարկի տրամադրման դրական որոշում կայացնելու համար էական համարվող պայմաններից որևէ մեկը:

* Սույն վարկատեսակով նախատեսված վարկերը տրամադրվում են ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման եվ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2026 թվականների» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի պայմանների փոփոխության դեպքում գործում են ՀՀ կառավարության որոշման տվյալ պահին գործող պայմանները:

** Վարկառուն պարտավոր է նախատեսված աշխատանքներն ավարտել վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը հետևյալ ժամկետներում (եթե վարկային պայմանագրում այլ ժամկետներ և դրույթներ սահմանված չեն).

- այգեհիմնում՝ 2 տարի (ընդ որում, գարնանն այգետնկումը պետք է կատարվի մինչև հունիսի 1-ը, իսկ աշնանը՝ մինչև դեկտեմբերի 1-ը)

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

- ոչ ավանդական, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակություն՝ 1 տարի (ծնեբեկի դեպքում հիմնական աշխատանքների ավարտը՝ 2 տարի)
- ոռոգման արդիական համակարգերի ներդրում և (կամ) ջրավազանի կառուցում և (կամ) բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցի ներդրում՝ 2 տարի:

✓ *Վարկառուն պարտավոր է՝*
- *այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո առնվազն 5 տարի չօտարել ու նպատակային օգտագործել այգին (անշարժ գույքը) և առանց նախարարության համաձայնության չծանրաբեռնել այլ իրավունքներով*
- *ապահովել ներդրված հողատարածքում ոռոգման արդիական համակարգերի կամ ջրավազանի շահագործումը հետներդրումային 4 տարիների ընթացքում և չօտարել ներդրված հողատարածքը, իսկ բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման աշխատանքների ավարտից հետո առնվազն 5 տարի չօտարել ներդրված կարկտապաշտպան ցանցի հողատարածքը կամ կարկտապաշտպան համակարգը, առանց նախարարության համաձայնության չծանրաբեռնել այլ իրավունքներով և ներդրված հողատարածքում ապահովել կարկտապաշտպան համակարգի շահագործումը՝ հետներդրումային 5 տարվա ընթացքում*
- *այգեհիմնումից հետո պայմանագրի գործողության ընթացքում այգիներում ապահովել տնկիների առնվազն 75% կպչողականություն:*

*** ա) Այգեհիմնում կատարելու դեպքում՝ 96 ամիս, մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը՝ 60 ամիս,
բ) առանց կարկտապաշտպան համակարգեր ներդնելու դեպքում՝ 84 ամիս, մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը՝ մինչև 36 ամիս,
գ) առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգեր (կաթիլային կամ անձրևացման) ներդնելու, ինչպես նաև ջրավազանների կառուցման կամ ընդլայնման դեպքում՝ 48 ամիս, մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս,
դ) ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակության դեպքում՝ 24 ամիս (ծնեբեկի դեպքում՝ 60 ամիս), մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս (ծնեբեկի դեպքում՝ մինչև 48 ամիս):

****

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսավարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվում է՝

✓ *այգեհիմնման համար՝*
- ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 10 տոկոսային կետով
- ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում՝ 6 տոկոսային կետով.

✓ *առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցանցի ներդրման համար՝*
- ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 13 տոկոսային կետով

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

- ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում՝ 8 տոկոսային կետով.

✓ *ոչ ավանդական բարձրարժեք, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման համար՝*
- ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 13 տոկոսային կետով
- ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում՝ 8 տոկոսային կետով.

- գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներին՝ 18-ից 35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին, 63 տարեկանը լրացած ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին և այն առևտրային իրավաբանական անձանց, որոնք ունեն 18-ից 35 տարեկանը չլրացած կամ 63 տարեկանը լրացած մեկ հիմնադիր (մասնակից), բաժնետեր, որը հանդիսանում է նաև նշված առևտրային իրավաբանական անձի տնօրեն (վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին), տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվում է՝

✓ *այգեհիմնման համար՝*
- ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 8 տոկոսային կետով
- ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում՝ 4 տոկոսային կետով.

✓ *առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցանցի ներդրման համար՝*
- ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 10 տոկոսային կետով
- ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում՝ 6 տոկոսային կետով.

✓ *ոչ ավանդական բարձրարժեք, այդ թվում՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման համար՝*
- ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 13 տոկոսային կետով
- ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում՝ 7 տոկոսային կետով.

ընդ որում, առևտրային իրավաբանական անձը պետք է վարկային պայմանագրի գործողության ժամկետում չիրականացնի իրավաբանական անձի հիմնադրի (մասնակցի), բաժնետիրոջ փոփոխություն, ինչպես նաև վերջինիս հիմնադիրը (մասնակիցը), բաժնետերը պետք է վարկային պայմանագրի գործողության ժամկետում չօտարի բաժնեմասը (բաժնետոմսերը) կամ դրանց մի մասը:

➢ ***սուբսիդավորման տոկոսային կետը չի կարող ավելի լինել, քան տրամադրվող վարկի տոկոսադրույքը:***

***** Վարկի մայր գումարի ամբողջական վաղաժամկետ մարում կարող է իրականացվել ֆինանսական կառույցի մոնիթորինգի և նախարարության կողմից սահմանված կարգով իրականացված մոնիթորինգի դրական եզրակացությունից հետո

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

1.1. Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.

- ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:
- ✓ Գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:

1.2. Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.

- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3,000-4,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 2,000-3,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 11,000-12,000 ՀՀ դրամ
- ✓ Գույքի գնահատման վճար՝ սկսած 5,000-20,000 ՀՀ դրամ:

2. Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Վարկառուին և Երաշխավորին կտրամադրի վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են վարկառուին տրամադրվելիք վարկի էական պայմանները:

3. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

4. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

5. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին՝ «Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» և «Անկախ գնահատողներ ցանկ» Հավելվածներով:

6. *Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում, «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան», «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի» «Քաջարան» և «Նոր Նորք» մասնաճյուղերում:*

7. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- ✓ Վարկառուի, Երաշխավորի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

8. Վարկի մերժման գործոններն են.

- ✓ Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

9. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկը իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

10. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ https://www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:
11. Երաշխավորն իրավունք ունի.
    - Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
    - Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև Վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:
    - Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող Ոչ ֆինանսական ծառայությունների սակագների:
12. Արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսագումարների (առկայության դեպքում նաև տույժերը, տուգանքները) գանձման, ինչպես նաև տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:
13. **ԱՐՏԱՐԺՈՒԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ:**
14. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝** www.fastbank.am:
15. **ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ՝ ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ԻՍԿ ՏՈՒՅԺԵՐԸ/ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑՎԱԾ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԻՄԱՑ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ:**
16. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**
17. **ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:**
18. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ ԵՎ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**

Հաստատված է՝
Տնօրինության 29.01.2026թ.-ի
Թիվ DEC 12-08 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 13.02.2026թ.-ից:

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ՝ www.fastbank.am: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:
20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:
21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am:
22. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐՋԻՆՍ ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ